



ՊԱՇՏՈՆ

ԱՆՀԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՆՀԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ

ԱՆՀԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Կոմիտեների համակարգող

Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

Նոյեմբեր 28, 2022թ.

Դեկտեմբեր 09, 2022թ.

Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է փորձառու, մոտիվացված և հմուտ թեկնածուի, ով պատասխանատու է ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

ԱՆՀԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բանկի բաժնետերերի ժողովի, Խորհրդի նիստերի կազմակերպում,
- Բանկի Խորհրդին կից կոմիտեների նիստերի կազմակերպում,
- Վերը նշված մարմինների նիստերի օրակարգերի, ծանուցագրերի, արձանագրությունների կազմում,
- Նշված նիստերի շրջանակներում պահանջվող կամ ներկայացվող նյութերի հավաքագրում, ամբողջականության և պահանջվող ձևաչափին համապատասխանության ստուգում ըստ սահմանված ժամկետների,
- Բանկի կորպորատիվ կառավարման հարցերով Խորհրդի նախագահի և Վարչության նախագահի հանձնարարությունների կատարում:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացություն
- Հաղորդակցման հմտություններ
- Վերլուծական հմտություններ
- Կատարողական ցուցանիշների ապահովման ունակություն
- ՀՀ բանկային օրենսդրության իմացություն
- Համակարգչային գիտելիքներ
- Անկախ աշխատելու ունակություն
- Ուշադրություն մանրուքների նկատմամբ, միաժամանակ մի քանի առաջադրանքներ կատարելու հմտություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացում
- Կազմակերպչական հմտություններ և ժամանակի արդյունավետ կառավարում
- Լարված գրաֆիկով աշխատելու կարողություն

- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին, ապա խնդրում ենք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այդի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «Այդի Բանկ» ՓԲԸ անվանումով:

«Այդի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ <https://www.idbank.am/>: